

ՊԱՏՄԱՆՔ

Հարկահան պինդ 8 ՄԷՃ.
Չափառաց 40 ՄԷՃ.
Վերականգնող 4 ՄԷՃ.
Չափառաց 5 ՄԷՃ.
Խաղաղարար թերթի պինդ 60 փոքր
չափառաց տողը մեկ անգամի հա-
մար 3 դուրոս, երկու անգամի հա-
մար 2 դուրոս, առերին անգամներու
համար գաղտնակարգութիւն կրկնայ:



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՍԱՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՊԱՏՄԱՆՔ

Հարկահան պինդ 8 ՄԷՃ.
Չափառաց 40 ՄԷՃ.
Վերականգնող 4 ՄԷՃ.
Չափառաց 5 ՄԷՃ.
Խաղաղարար թերթի պինդ 60 փոքր
չափառաց տողը մեկ անգամի հա-
մար 3 դուրոս, երկու անգամի հա-
մար 2 դուրոս, առերին անգամներու
համար գաղտնակարգութիւն կրկնայ:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 25 ՅՈՒՆԻՍ

Ե.Չ.Ի

Լրագրոյ տպագրատան գործա-
ւորներէն ոմանց հիւանդանալուն
պատճառաւ, թերթիս հրատարակու-
թիւնն այս աւուր մնաց:

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 2 յուլիս.

Սնդիկական զորաց Պրիմանիոյ հողէն
անցնելուն դէմ Պրիմանիոյ թաղապետին
արգելք հանելը կը հաստատուի: Անգ-
ղիոյ կառավարութիւնն այս արգելքին
դէմ հարկ եղած միջոցները կը քննէ:

Աթին 2 յուլիս.

Լոնտրայէն լուր կուտան թէ շուրջ
նահանգական Պ. Վալաորիթիս որ
Թունաստան կանչուած է, չուզեր դե-
պանատունն առաջին քարտուղարին յանձ-
նել, չէլենական կառավարութիւնն այս
գործէն Անգղիոյ կառավարութեան իմա-
ցուց: Պ. Վալաորիթիս եթէ մերժուի
չարունակէ, զատուածանի պիտի ենթարկուի:

Պարիզ 3 յուլիս.

Քանի մ'երեսփոխանք երկաթուղ-
եաց շինութեան համար նոր միջոց մը
սահմանել կառավարեն:

Մատրիտ 3 յուլիս.

Ժովիլար և Էսթիպան զորավարաց
գունդերն երկկ միացան Իսթանբուլ մօտ,
և Քարթսեանք կը փախչին:

Փարիզ 4 յուլիս.

Ազգային ժողովը Լիոնի երկաթուղ-
ւոյն վերաբերեալ օրինաց ծրագիրն ըն-
դունեց:

Փարիզ 5 յուլիս.

Մաք-Մարտի Մարաշախտ վճարայլ
վերադարձաւ:

Վիեննա 5 յուլիս.

Գերմանիոյ և Իտալիոյ զաւթառանգ
իշխանները քաղաքս եկան հրաժարեալ
Ֆէրդինանտ կայսեր յուղարկաւորու-
թեանը ներկայ գտնուելու: Կայսրն եր-
կաթուղւոյն կայարանը երթալով ընդուն-
եց զանոնք ու կայսերական պալատը
տարաւ:

Լոնտրա 5 յուլիս.

Օմա Բոնո 32 3/16
Փոխ 3865 65 1/2
» 1869 53 7/8
» 1871 63 3/4
» 1872 83 7/8
» 1873 51 3/4
Նոր փոխառութիւն
Անգլ Բոնո 94 1/8

Լիւբլյու 5 յուլիս.

Բաւարական Միտլինկ-Օրլէան 7
» Ֆար Տուրան 5 1/8
Ծախուած 45000 հոգի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Խորիմեան Սրբազան երկուշաբթի
օրը Կ. Պօլիս վերադարձաւ Իզմիրէն:

Գաղղիոյ արեւելեան նաւահում-
բին հրամատար Լարօնսիէր Լընուրի
ծովապետն երկուշաբթի օրը մայրա-
քաղաքէն մեկնելուն առթիւ Վեհ.
Սուլթանին ներկայանալու պատիւ
ունեցաւ:

Կրուի թէ, Եգիպտոսի Բարձր
Խորթին զրկուած վերջին Խաթիբ-
Հիւսնիւնը Խորթը Կ. Պօլիս հրաւի-
րելէ զատ՝ իշխանութիւն կուտայ ա-
նոր Կարմիր ծովուն եղերքը գլա-
նուած Զէյլահ անուն նաւահանգիս-
տին իւր շրջականերով մէկտեղ Ե-
գիպտոսի հետ միացնելու:

Գաղղիոյ մէջ գործութիւնները
պահ մը դադարելէ ետեւ նորէն յա-
ճախել սկսան: Միջեալ շաբթու յիշ-
եալ գիւղին Եօսուրածի չէյմէ թաղին
մէջ երկու տուն կողոպտուեցան: Շա-
բաթ գիշեր ալ երրորդ տուն մը կո-
ղոպտուեցաւ գիւղին կեդրոնը:

Քանի մ'օրէ ի վեր հրգեհներն
յաճախել սկսան մայրաքաղաքի մէջ.
շաբաթ գիշեր զատու փառա հրգեհ
պատահեցաւ. կիրակի գիշեր Շէհիր
Էմինի, երէկ առաւօտ ալ իւսկիւտար
Սուլթան թէփէ ըսուած թաղը, Բա-
րեաղդարար երեքն ալ շուտով
կոխուեցան:

Պառնայէն եկած վերջին լուրե-
րէն կը հասկցուի թէ շերամն այս
տարի չէ յաջողեր: Պառնայի հաւն-
աւորը բոլորովին անպատան ելեր են.
միայն չորսօրի հունարը գահացու-
ցիւ արգիւնք տուեր են:

Սակայն Բէթմահալէն, Պիլէհի-
կէն Բիւրլիկէն եւ Մահալլէն եկած
լուրերն աւելի յաջող են:

Իզմիրի մօտերը Դամասկոսի թղթ-
թատարը զարնող աւաղակախումբէն
զատ, Եօթն Զէյլահ քաղկացեալ
նոր աւաղակախումբ մ'ալ երեւան
եկեր է, որ Տօնանիճի կողմերն աս-
պատակելէ ետեւ՝ վերջին օրերս ալ
թափանջը գեղին վրայ գնացիր են,
ուր 600 Հայ եւ Թուրք բնակիչք կան,
եւ 400 իւրա պահանջներ են՝ գիւղը
կրակի տալու սպառնալիքօք:

Նիկիոյ միջոց կառավարիչը զօրեղ
միջոցներ ձեռք առեր է յիշեալ ա-
ւաղակաց դէմ:

ԱՌՍԿԱՆՆՈՒՊՈԼԻՍ
ԵՍԶԱՄԵՆ ՈՒՄՈՒՄԻՆԻ

24 յունիս, երեքշաբթի իրկուսն 47 19
25 յունիս, չորեքշաբթի առաւօտ 47 24
բացուեցաւ 47 24
կէս օր

Կ. Պօլիս 24 յունիս

Սեփէրի Երկաթի բաժինը Անգլիոյ 7.32
« Գոթիսական թիւան » 5.30
Կ. Պօլիս Պանքային » 5.32
Քրէտի Երկաթ » 9.53
Բրէտի Օսթրիա-Յիւրք »

Երկաթուղեաց	Յո.	122 3/8
Փոխ.	1863	334
»	1865	335
»	1869	274
»	1872	84 1/2
»	1873	264
Թրաքիայ	Փառ. իր	3 20

ԲՆԱԿԱՆ ԳՐԱՐԱՐՈՒ

24 ՅՈՒՆԻՍ

Անգլ. իրա	գոթիս.	410 32
Նորթուս Եւրոպ.	»	88 6
Իմպերիալ Ռուս	»	89 30
Երբը Բոս	»	54 30
Հինգ Գրանք	»	—
Հինգ Գրանք	»	405 5
Պիլէն	»	130 20

Ա.Զ.Գ.Ա.ՅԻՆ

ԹԱՂԱՅԻՆ ՀԱՇՈՒՆՈՒՄՈՒՄ

Հինգ վեց տարիէ ի վեր իրարու
յաջորդող Տնտեսական Խորհուրդք,
Թաղական Խորհրդոց հաշուական հա-
մարառութեան նկատմամբ կանոն
մը դրած են, որոյ անտեղութիւնն
առաջին օրէն ի վեր փորձերով հաս-
տատուած է:

Թէ և Սահմանադրութիւնը Թաղ-
Խորհուրդներն համարառու կը ճան-
չէ առ Տնտեսական Խորհուրդն իրենց
հաշուական մատակարարութեանց նը-
կատմամբ, բայց Տնտեսական Խորհրդ-
քոյ սահմանած համարառութեան ե-
ղանակը Սահմանադրութեան տրու-
մագրած պարտուց և իրաւանց սկզբ-
բան զլիտովին հակառակ է, հետեւա-
բար անմիջական բարեկարգութեան
կարօտ:

Ինչ կրնէ Տնտեսական Խորհուր-
դք, Եւրոպ. կերպով կը կատարէ իւր հա-
մարառութեան պաշտօնը:

Ուրիշ բան չընել, եթէ ոչ Թաղ-
Խորհուրդներէն պարզ հաշուեցոյցներ
կընդունել և 31 օր եկեղեցեաց բաժն
ի տես ժողովրդեան գնելէ ետեւ՝ կը
վաւերացնէ, և ասով կը կարծէ թէ ինք
իւր համարառութեան պաշտօնը, Թաղ-
Խորհուրդք ալ իրենց համարառու-
թեան պարտք լիովին կատարած կը
լան, և այն հաշիւներն այնուհետեւ
ճիշդ ու վաւերական համարուելէ զատ
անքննելի ալ են:

Թաղ Խորհուրդք չորս տարի պաշ-
տօնավարութիւն կրնան, թաղին ե-
կեղեցւոյն և վարժարանին ելքն ու
մուտքը կը մատակարարեն, ասոնց
իւրաքանչիւրին համար մանրամասն
հաշիւներ կը բռնեն, անտրանկներ կը
լցնեն, և ի վերջոյ՝ չորս տարուան
հաշիւները չորս տարէ բացկացեալ
հաշուեցոյցի մը մէջ սղմեցնելով կը
ներկայացնեն Տնտեսական Խորհրդոյ
ի վաւերացումն:

Արդ կը հարցնենք. Ինչ կրնայ
հասկնալ Տնտեսական Խորհուրդն այս
տեսակ հաշուեցոյցէ մը, Ինչպէս կըր-
նայ Գիտնալ թէ իրեն ներկայացեալ

հաշուեցոյցները տուեմներուն ման-
րամանութեանց ճշդ իւ համաձայն են,
և թէ՛ հաշիւները կանոնադրապէս,
խղճի մտք, ուղղութեամբ և հաւա-
տարմութեամբ բռնուած են, և անոնց
մէջ բնաւ անկանոնութիւն կամ ուրիշ
որ և է կասկածի առիթ տուող կէտեր
չկան:

Ասոնք հասկնալու համար նոյն իսկ
հաշուեմու մարները մանրամասնաբար
քննելէ զատ ուրիշ Եւրոպ. կրնայ
ըլլալ:

Ծածկող էտ կամ մողական ար-
ւեստի հմուտ ըլլալու է Տնտեսական
Խորհուրդ մը, որ քանի մը տողէ
բացկացեալ հաշուեցոյցի մը վրայ հա-
րկանցի ախարկ մը ձգելով՝ տուեմ-
ներուն ուղղութիւնն ու կանոնառ-
ութիւնն իսկոյն հասկնայ:

Այս տեսակ համարառութիւն մը
համարառութիւն չէ, այլ տղայական
խաղ մը, աննշանակ ֆորմալիթէ (պաշ-
տօնական ձև) մը, կամ տպագային
մէջ ժողովրդեան կողմէ ծագելիք բո-
ղքաւանց ձայնը խեղդելու և կատար-
ւած պակասութիւնները կամ յոռի մա-
տակաւորութիւնները ծածկելու և
անոնց հեղինակները մոլոր մէջ պա-
հելու համար Խորհուրդ մը:

Թերևս Տնտեսական Խորհուրդք
առարկան թէ, հաշուեցոյցներուն 31
օր ի տես ժողովրդեան դուրին իւ-
րենց քննութեան պակասը կը պիւ-
մը լցուցած կըլլայ, իր թէ ժողովուր-
դք Թաղ Խորհրդոյ մը քառամեայ
մատակարարութեան մանրամասնու-
թեանց մը առ մի վերահասու եղած
և անոնց մէջ պակասութիւն և այլն
դտնու իր կամ չգտնուելէ հաստատա-
պէս որոշելու կարող վիճակի մէջ ե-
ղած լլլայ:

Այս տեսակութեան ս'ր աստիճան
անհիմն ու անտեղի ըլլալն ինքնին
յայտնի է, որովհետեւ Տնտեսական
Խորհուրդն ինչ որ տեսնէ իրեն յետ-
կայացեալ հաշուեցոյցին վրայ, ժող-
վուրդն ալ նոյնը միայն կը տեսնէ ե-
կեղեցւոյն բաժն կախումբ հաշուե-
ցոյցին վրայ, առանց բնաւ տեղեկու-
թիւն ունենալու տուեմներուն ման-
րամանութեանց:

Ժողովուրդն իւր քննութեան իրա-
ւունքը Տնտեսական Խորհրդոյ յանձ-
նած է սահմանադրապէս Եթէ Տն-
տեսական Խորհուրդն իւր պարտքը
ճշդ իւ չկատարէ, ժողովուրդն՝ որ իւր
եկեղեցւոյն և գաղղիոյ տէրն է և
իւր տուրքով կը հոգայ զանոնք, ոչ
ապաքէն իրաւունք կուրենայ երբ և
ըլլայ բողոքելու և քննութիւն պահան-
ջելու, եթէ իւր ընտրած մատակարար
մարմինն հաշուեցոյց վրայ կուտած մը
ծագի, քանի որ այն հաշիւներն ըստ
օրինի քննուած չեն համարառու մար-
մինէն:

Վերջապէս անտեսական Խորհրդ-
քոյ համարառութեան այս տարօրի-

նախ զբաղվելովն ոչ միայն սահմանա-
դրութեան պահանջած համարադրու-
թիւնն ըլլալէ հետեւ, այլ եւ ժողո-
վրդեան իրաւանց բացարձակ զըր-
կանք և յոռի մատակարարութեանց
անուղղակի պաշտօնական քաջայե-
րի :

Այսպիսի դրութիւն մը չկրնար
առանց ազդամբնաւ հետեւանաց շա-
րունակել . հետեւաբար, դարձեալ
կրնենք, անմիջական բարեկարգու-
թեան կարօտ է :

ՄԱՍԻՍԻՈՐ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՔ

Ի վերայ հանգստեալ Ներսէս Երեմի
Լուսինայի Կոնստանտնուպոլսի
Կաթողիկոսի Կոնստանտնուպոլսի
Կաթողիկոսի Կոնստանտնուպոլսի

(Եր. Կոն. 1696)

Չարմանամ թէ ո՞րպիսի անդգու-
շութեամբ են շարժիլ երևելի իշխան-
քնն թիֆլիզայ քաղաքին, և Ներսէս
արքեպիսկոպոսի նման անաչառ,
ազդատէր և զգոն հոգեւորականի
վրայ այդպիսի աններելի ներգործու-
թիւն յուսանեն, ծածկելով իւրեանց
սխալմունքն, ինչպէս երևի այս ի
ներքոյ յիշեալ երկուց դրութեանց
Ներսիսի ի Պետերբուրգ առ մի բա-
րեկամն իւր :

« Բարեմունեք Գերազնիւ Բարու-
թիւն Աստուածատուրեան, սիրեց-
եալ ի Բրիտանիա .

« Զառիմ յոյժ զի դրեմ այժմ զայն-
պիսի իրողութիւն, որ ունի ցաւեցու-
յանել զսիրտ ամենայն լոյսաց արանց
ազդատիրաց . բայց զի ազդային տա-
րաբախտութիւնն չէ լրացեալ տակա-
ւին, այն է ահա զի զիս հարկադրէ
յաւելլով դրել և ձեզ ցաւելով ըն-
թեւեւել :

« Ես գորով, այժմ և՛ ամեայ հա-
ռակաւ և իմէջ ութ ամեայ հասակի
իմոյ մտեալ ի ուշադրանքս իւրեան
հոգեւորական կարգի, ահաւասիկ
վասն 38 ամեայ մշակութեան իմոյ
սրբոյ եկեղեցւոյ հայաստանեայց՝
դրութիւնն Նորին սրբազնութեան
Տեառն Եփրեմ կաթողիկոսի ամե-
նայն Հայոց գումանի առ Նորին սրբ-
ձառնալոյսութիւնն կենեալ Ալիք-
սանդր Նիկողայիս Գօլիցինն և առ
կուսակալն տեղւոյն Նորին Բարձր
Գերազանցութիւնն Ն. Ս. Բ. Բ. Բ. Բ.
և համաձայն նոյնի՝ ստորագրու-
թեամբ նորին բարձրագոյն քահա-
նայապետութեանն և սուրբ ժողո-
վոյն գումանի առ իս իմ Ատաւես-
տանն » :

Այլ դու տես թէ ո՞րքան ցաւոյ
իցէ արժանի, զի սոյն ամենայն մա-
հու չափ չարարանք, բազմամեայ
աշխատութիւնք իմ ի մէջ դառնա-
ղոյն կացութեանց տախկան սահ-
մանաց ի ներքոյ բարբառասկան
բռնակալութեանց սրբ. յատկացուց-
եալ էին զանձն իմ ընդ ամենայն
կողման աշխարհի տարածեալ ազ-
գիս Հայոց, իբրեւ զմշակ հարազատ
եկեղեցւոյ Հայաստանեայց և յատուկ
տեղի հոգեւորական միջնորդութեան
արանց ազդատիրաց, ահա ընդդէմ
ամենայն յուսոյ և տակալութեան իմ
և ամենայն ազգիս մերոյ, մինչեւ
յուսով էաք թէ աստ ի ներքոյ ա-
մենողորմած հովանաւորութեան Նո-
րին կայսերական մեծութեան ամե-
նայն Ռուսաց պատկաւ ունիցիմք
այնքան ամեայ ծառայութիւնք մեր,
զներհալն այնորիկ տեսանեմք ընդ
յառաջ երկալ մեզ . և եթէ ոչ ար-
դարադատութիւնն աստուածաման

սուրբ կայսերութեան ի լոյս հանգե-
ղարդարութիւն մեր թէ ունիցիմք,
մերձ է ահա զի և՛ ամեայ աշխատու-
թիւնք իմ ամենայն ի միասին կո-
րուսանիցիմք :

« Քանզի տունն Բեհբուտեանց
երբ ընկալեալ է զՄեկեքական պաշ-
տօնատարութիւն ի թագաւորացն
Վրաց, ըստ ստիական անսահման կա-
ռավարութեան անսահման կերպիւ-
տարածեալ է զիւր բռնութիւնն ի
վերայ ամենայն բնակչաց Թիֆլիզոյ
քաղաքի, թէ մարմնաւորաց թէ հո-
գեւորականաց, անգանադանապէս նա-
և ի վերայ վիճակաւոր արքեպիսկո-
պոսին, մինչև արքեպիսկոպոսն յա-
մենայն ժամանակս իշխանութեան
Վրաց չէ համարձակեալ առանց փի-
լոնի մասնել ի գաւիթս տան Մեկե-
քին . և իւրեք կանոնաց և օրինաց ար-
եպիսկոպոսին առ ամենայն հոգեւո-
րական գործն պատկանեալս արքե-
պիսկոպոսութեանն եղեալ են միշտ հա-
ճութիւնք կամաց Մեկեքին և ազ-
դականաց նորա, ըստ որոյ անա-
նելի եղեալ յամենայն ժամանակի
վասն ամենայն արքեպիսկոպոսաց ի-
մաց նախորդաց՝ բռնակալութիւն Մե-
կեք Բեհբուտեանց յամենայն ժամա-
նակս իշխանութեան Վրաց, Չարա-
րիա՝ զպայն կենեալ Մեկեք Դարչինն
Աւետիք եպիսկոպոսն զհայր Նորա, և
Պետրոս եպիսկոպոսն՝ զինքն զհար-
չի Մեկեքն բանագրեալ են ըստ որ-
պիսութեանց այնմ ժամանակին, այլ-
քն ևս այլովք դառնութեամբ են
զկեանս իւրեանց անյուշեալք, մին-
չև ցվերաժամանել օրհնաբանեալ հո-
վանաւորութեամբ ահալ տէրութեան
ամենայն Ռուսաց, Յեւոյ որոյ թէպէտ
և այնպիսի բռնակալութիւն յիշեալ
Բեհբուտեանց երեւեալէս չէ հըզ-
ուացեալ ի վերայ հաստիակութեան
կամ ի վերայ արքեպիսկոպոսին, այլ
անիրաւաբար համարեալ թէ դեռ
նոյն է մինչև ցայսօր ժամանակի, և
չէ պակասեալ կամ նուազեալ . այն-
քան՝ մինչև վստահեցին ընդդէմ
անկանոն կամաց նորա յառաջ քե-
րէ զկանոնաւոր ինչ հասարակութիւ-
նն կամ արքեպիսկոպոսն . ըստ ո-
րոյ և յամենայն ժամանակս բարձ-
րանալով իշխանութեան Ռուսաց առ-
տէն Նախորդն իմ հանգուցեալ Յով-
հաննէս սրբազն արքեպիսկոպոսն,
թէ քանի՛ քանի վշտօք վշտացեալ
ի նոցանէ ի բոլոր ժամանակս կե-
նաց իւրոց, բազումք դիմեն՝ գո-
րով ականատեսք, և Աստուածատուր
արքեպիսկոպոսն որ այժմ ի Կոս-
տանդնուպոլսի գումանի վերապատ-
ւեալ, թէ սրբոյն չարաչար անոր-
գանօք աստէն գոտա ի նոցանէ չա-
րախօսեալ, կամեցողն կարէ տեղե-
ղեկանալ : Իւր զինն նոցա ես ահաւա-
ւասիկ գորով տեղի մեծագոյն յուսոյ
յատուկ գիտաւորութեամբ Նորին
քահանայապետութեանն սրբազնա-
գոյն Պատրիարքին Արարատեան ա-
թուոյ և սուրբ ժողովոյն եկեալ առ-
տէն յաղագս բարեկարգութեան ե-
կեղեցւոյ և եկեղեցականաց Հայոց,
վստահանամ տեղ թէ յօրէ մտա-
նելոյ իմ աստ ի պաշտօն վիճակաւ
արքեպիսկոպոսութեան Հայոց վը-
րատանաւ, համաձայն կողման իմոյ
առ եկեղեցին Հայոց և առ Նորին
կայսերական մեծութիւնն ամենայն
Ռուսաց ի վերայ պարտաւորութեան
իմում պաշտօնի, մինչև ցայսօր ժա-
մանակի ի լոյս մտացեալ զամենայն
հարկաւորութեան վասն անձին իմոյ և կե-
նաց, առ որ հարկաւորութեանն է, փո-
խանակ հոցի գըար յատուումս իմ
առեալ ամենայն զօրութեամբ և կա-
րողութեամբ հոգւոյ և մտաց՝ և

մարմնոյ իմոյ մահու չափ տաւ ապակ-
րութեամբ դարձ և զգիշեր անհան-
գիստ եղեալ ջանացեալ եմ միայն ըզ
հոգեւորականութիւն Հայոց իմումս
վիճակի հանել ի հրատարակեալ ան-
պատուութեանն : Այլ այստե ամենայ-
նիւ ոչ կարացեալ ապառ կացուցա-
նել զանձն իմ ի սոփոական մեկ
բռնակալութեանց Բեհբուտեանց, առ
հաւաստի մտաւ ցանկեմ ընդ ընդ այ-
նորմ զօրինակ սկզբնաւորութեանց տա-
րածախութեանն ընդ մեզ Մեկեք
Դարչի կենեալ Բեհբուտեանց որ յառ-
բայ ամին ստորապրութեամբ աստ-
բայ բողոքն : Ըստ որոյ զամենայն ըզ
քահանայս միշտ նոյնպէս օտարա-
ցուցեալ ի հնազանդութեանն արքե-
պիսկոպոսին, և իշխանութիւն արքե-
պիսկոպոսութեանն գորով նուաճեալ
յառաջադրոյն ի ներքոյ Մեկեքական
իշխանութեանն իւրոյ, այժմ թէպէտ
ի մասին մարմնաւորական իշխանու-
թեանն Մեկեքութեան գաղափարեցուց-
եալ է զնա աշխարհութիւնն, այլ ի մա-
սին հոգեւորականաց դեռ անգա-
ղար է նորա ներգործութիւնն առ
ամենայն պատկանեալս արքեպիսկո-
պոսի, որպէս և յայտնի առնեն օրի-
նակք :

« Եւ յաղագս այսորիկ, երբ առա-
քեցաւ առ մեզ ի Նորին պայծառա-
փայլութեան կենեալ Գօլիցինն յա-
ւալափրութիւն վասն յօրինելոյ ըզ
սոււմարս եկեղեցւոյ և եկեղեցա-
կանաց և ժողովրդոց Հայոց և այ-
լոց, յայնմ օրէ մինչև ցայսօր ժա-
մանակի յայտնի սխալութեամբ
չարացաւ նա ընդ մեզ անհայտնի ե-
ղանակաւ, մինչև յամենայն գեղ-
տեմերի ես ինքնին առեալ ընդ իս
զարած սրբազանն վարլամ միտրո-
պօլիտն և Զեղարին ամենայն վրա-
տանու և իմեթիթու՝ տարայ ի տուն
նորոյ միջնորդել զհաշտութիւն, և ոչ
եղև . յետ նորա ինքն կուսակալն ինք-
նին գնացեալ իտուն նորա առնել քան
զերկու ժամ իրօսեցեալն էր ընդ նմա,
այլ բնաւ չէր սպեղեալ ի գլուխ նա-
րա և ոչինչ . այնպէս զի, երբ սկսայ ես
իդրել զինչս եկեղեցականս, թէպէտ
և գրեցի զգործն, այլ մինչև ցայ-
սօր չկարողայայ տեղեկանալ վասն
հաշտոց եկեղեցականաց, զորոց հա-
տատուն կարծիք է թէ ցայս վայր
ունեցեալ արքեպիսկոպոսութեանց և
ոչ մի եկեղեցի չունիցի այժմ բնա-
ւին մասն արեւելաց իւրոց նմացեալ
վասն իւր, և . . . առեալ հրատա-
րակեցին նախանցեալ ամօթանք .
ես լաւ համարեցայ հոգալ թեմէս
վասն պահպանութեան արքեպիսկոպո-
սային, և առ այն աշխատասիրեալ
յօրինելի զոյցակ, զորոյ զօրինակն
տաւեալ վասն թարգմանելոյ Ռուսե-
րէն և առաքեմառ քեզ ոչ անագան-
այլ զայն ես ոչ կարողացայ տալ ըն-
թեւեւել յամենայն եկեղեցիս և
կարգել զերեսփոխանն, բայց միայն
յերկուս կամ յերկուս Եկեղեցիս . Յետ
նորա իրեւ սկսայ ի գրել զժողո-
վուրդն, ձայն հրատարակեալ ի մէջ
հաստիակութեանն սկսան չիթել ըզ
ժողովուրդն թէ արքեպիսկոպոս մեր
կամ զսոգեւոր տալ, և վասն այնր
գրէ զժողովուրդս, զի գիտացէ ըզ
թիւն, որով և պարտաւորեցայ ես
թոյլաբերել աստ ի քողաքն և գրել
զայլ վիճակն մեր զՍոփիթ, զՎա-
ղախ, զԳաղաթիս, զԵրեսփոխա-
նու, և զՎրաստան ամենայն իւրա-
ւորութեամբ և հոգեւոր և մարմնա-
ւոր միջնորդութեամբ բոլոր ժողո-
վրդեանն, կարգադրելով յամենայն
ի նոսա զհարկաւորութեան վասն բարե-
կարգութեան, և ի հարկաւորեալ
տեղիս կացուցանելով զԵրեսփոխանս
ըստ այն ցուցակի, և անօրինելով զօգ-
տակարս և շահաւետ վասն եկեղեց-

ւոց և ժողովրդեան : Իւր իւրե սոյն
պիսի յաշտութեամբ և մեծ գոհու-
նակութեամբ ամենայն ժողովրդեան
վրաստանու վերադարձաք ի քա-
ղաք այս, և գործն ըստ կարգի մեր-
ձեցեալ յաւարտ՝ ստիպէր հարկն ի
գործ դնել զհարկաւորան յաղագս
եկեղեցւոյ և հոգեւորականաց և
ժողովրդեան քաղաքիս, ոչ ևս կա-
րողացեալ հանգուրժել ընդդէմ
կրից և մտաց և խորհրդոց իւրոց,
Մեկեք Դարչի Բեհբուտեանց, ի վերայ
անտեղի պատճառանաց իրեք, յո-
րում մեք գտանէաք պաշտպան
վճարահատութեան երկուց պատրի-
արքացն և սուրբ ժողովոյն Արարատե-
անն աթուոյ ի մասին քահանայա-
կան վիճմանց իրեք, թօթախեալ
զամենայն մէկ երս բարեպետութեան
իւրոյ համաձայնութեամբ և զբոլ իւ-
րոյ Պօլիցեայի անգամ թիւս ծղաւ-
րայի և կենեալ Յովսէփ Մեկեքեան
Բաշի Բեհբուտեանց և եղբօր Թրդ-
ուոյն իւրոց կենեալ Արսէնին և Արի-
ստղամ Սոփիանիկ կաղեօնել ի վազե-
տիցիայի և օմանց համախոհից իւր-
եանց Մօնիթյանց Մկրտումին և
Բաստամանց Բիթանին և այլոց եր-
կուց կամ երկոյ, գրեցին զմահաբ-
եւ ետուն ձեռագրել նաև այլոց, որք
բաց ի նշանակեալ անձանց ամենեքե-
անս առ հասարակ լի են խղճահա-
րութեամբ և տրտմութեամբ բազ-
մաւ, վրտանակ զի մասնակցեալ են
այնպիսի անվայելութեան, ոմանք
առ բարեկամական մասնակցութեանց
իւրեանց, ոմանք գորով նստողք ի
դուքանս նոցա, ոմանք առ երկելի,
ըստ որում՝ Մեկեքն ի կերպարանս
իւրում Մեկեքական իշխանութեան,
եղբայրն անգամ Պօլիցեայի և եղ-
բոր որդին Սոփիանիկ կաղեօնել Ե-
կապետիցիայի, և բազումք ևս այնու-
քեք են որոց չեն բնաւ յայտնեալ
զգիտաւորութիւն դրութեանն, այլ
զանազան խաբեւայութեամբ, ոմանց
թէ վտան այս անուռ քահանայի ա-
ւագերիցութիւն ինդրեմք, ոմանց
թէ քաղաքական շահաւետութեան
ինդրէր է և այլոց այլապէս, զորս
աւանտինիօք և ծառայելք Մեկեքին,
զօմանս պատրանք կուցայ ի տուն
Մեկեքին և Պօլիցեայի անգամ Ծղա-
ւրային : Այսպիսի պատրուութեամբ
ետուն ձեռագրել և առ Մօնիթ-
եանց Մկրտումին և Բաստամանց
Բիթանին, և այլք զմահաբեւ տա-
րեալ ի տուն նոցին այնպէս ստիպ-
մամբ և թախանձանօք հարկադրեալ
տան ձեռագրել . զորս լուեալ ես
գրով ինդրեցի ի կուսակալէն ոչ թո-
ղալ առանց օրինաւոր հոգացողու-
թեան . և նա առաքեալ զիս այնու-
գորութեամբ առ Գուպերնատօրն ի
մուտն արեւուն . յորժամ և նա հա-
րցեալ միայն վասն Զօհրայ Մեկեքի
այնպիսի հարկադրութեամբ ձեռ-
նագրեալ տուեալ ինքեւն և վասն
աղիւս Աղալոյ Գօլիցեանին, որ ի
չկամիւն ձեռագրել յարձակեալ էր
ի վերայ նորա կենեալ Յովսէփ Բեհ-
բուտեանց առ ի հարկանել և չէին
թողացուցեալ այլք : ի սոյն միջոցի
վերաժամանելով գիշերն՝ դադարե-
ցաւ գործաւորութիւնն, և ընդ լու-
սածագն առաւօտուն գնացեալ կու-
պերնատօրն այլուր յաղագս հա-
րկաւոր գործոց իւրոց, մնաց գործն
ի վերայ կուսակալին . յայնժամ նա
զայլոյցմամբ բազմաւ նախ տանել
տուեալ առ ինքն զմահաբեւ, մինչ-
դեռ անն ունէին ամենեքեան ոչնչ-
չայուցանելոյն զայն վրէժխնդիր լի-
նելով, ահա՛ յանկարծակի փոխեալ
զեղանակն ետ նոցա դարձեալ զայն
մահաբեւ, զոր առաքեցին առ սրբա-
նագոյն Պատրիարքն ի Զ. Ե. Ե. Ե. և

* Վերեն գրեալ վիսպաղին է :

Ի խոյոր գործակատար
Վ. Ռ. ՍՈՒԼԵ